

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ՆԻՍՏԻ**

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝

Լ.Մուրադյանի
Դ.Սամսոնյանի
Մ.Քարտաշյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
ղեկավար՝

Փ.Կարապետյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ ՝

**1. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ու
համայնքներում աշխատավարձի պարտքերի մարման գործընթացը**

*/Վարազդար Մկրտչյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի ֆինանսական և
սոցիալ-տնտեսական զարգացման
վարչության պետ /*

**2. Ծիրանի մթերման և հացահատիկի բերքահավաքի նախապատրաստական
աշխատանքների ընթացքը**

/Ա. Ղահրամանյան-ՀՀ Արմավիրի մարզպետ/

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը, ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները 01.06.2013թ. դրությամբ:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը անդրադառնալով ներկայացված տեղեկատվությանը նշեց, որ 2013 թվականի մայիսի 12-ի և 17-ի կարկտահարության հետևանքով հիմնականում վնասներ չկրած համայնքների գյուղապետարանների ֆինանսական գործակալները պետք է գործնական և ակտիվ աշխատանքներ ծավալեն ազգաբնակչության շրջանում սեփական եկամուտների հավաքագրման բարձր ցուցանիշներ ապահովելու նպատակով և առաջարկեց համայնքների ղեկավարներին՝ անձնական պատասխանատվությամբ վերաբերվել սեփական եկամուտների հավաքագրման գործընթացին, դրանց ցուցանիշները հասցնելով առավելագույնի:

Օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը: Նա մասնավորապես նշեց, որ ծիրանի ընթացիկ տարվա մթերումների հետ կապված գործընթացը կարգավորելու նպատակով 2013 թվականի հունիսի 24-ին մարզի տարածքում ծիրան մթերող և վերամշակող կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ կազմակերպվել էր խորհրդակցություն, որին մասնակից <<Սպայկա>> և <<Արևիկ Տրանս>> ընկերությունների պատասխանատուներին համապատասխան առաջարկություն է արվել վերանայել Արմավիրի մարզից ծիրանի գնման չափանիշերը, արժեքն ու քանակը, ինչպես նաև այցելել համայնքներ, զրուցել այգետերերի հետ, ներկայացնել ընկերությունների կողմից առաջարկվող հիմնական պայմանները և խնդրին փոխշահավետ լուծում տալ: Ինչ վերաբերում է հացահատիկի բերքահավաքին, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն արդեն ավարտված են հացահատիկի բերքահավաքին առնչվող նախապատրաստական բոլոր աշխատանքները:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը օրակարգային հարցի քննարկման արդյունքներով առաջարկեց ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին և հանձնարարեց մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պաշտոնակատար Վ.Աբրահամյանին՝ ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել ծիրանի ընթացիկ տարվա մթերումների, ինչպես նաև հացահատիկի բերքահավաքի հետ կապված գործընթացը և ընթացքում ծագած խնդիրների վերաբերյալ զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին՝ հնարավոր լուծումներ տալու նպատակով:

Օրակարգային հարցերի քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզխորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Արձ.՝ Դ. Դավթյան